«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը

ԱՌԱՐԿԱ	ՆԶՊ
ՀԵՂԻՆԱԿ	Մուշեղ Մկրտչյան
ՄԱՐԶ	Արագածոտն
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Լեռնապարի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն _____3-4
2. Գրական ակնարկ_____4-5
3. Գործնական համատեքստ_____5-10
4. Հետազոտական մաս_____11-20
5. Եզրակացություն_____21-22
6. Գրականություն_____22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մենք ուզում ենք , որ մեր երկրում բոլոր երեխաների համար բաց լինեն բոլոր դպրոցների և այլ կառույցների դռները, և որ նրանք, իրենց ծնողների ջերմությամբ ու աջակցությամբ շրջապատված, վստահորեն փնտրեն, գտնեն ու ապահովեն իրենց տեղն ու դերը հասարակության մեջ. (1):[1]

Մարդիկ լինում են տարբեր թե՛ իրենց բնավորությամբ, թե՛ իրենց տեսակով և հոգատարությամբ: Եվ այս տարբերությունն էլ ցանկացած հասարակության դարձնում է ավելի հարուստ: Սա իր արտացոլումն է գտել նաև դպրոցում:

Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝ օգտագործելով տարբեր մոտեցումներ, անհատական մոտեցումներ և հնարավորություններ:

Դժվարությունները երեխաների հետ կարող են տարբեր լինել կրթության մեջ: Երեխաներ կան, որոնք կարող են դժվարանալ կարդալիս, գրելիս, թվերի հետ աշխատելիս կամ շրջապատող մարդկանց հետ շփվելիս, հաղորդակցման խնդիրներ ունենան:

Երեխաների մի խմբի համար այդ դժվարությունները կարող են պայմանավորված լինել հաշմանդամությամբ: Դա կարող է լինել որոշ երեխաների համար ժամանակավոր, որոշների համար երկարատև և մշտական մասնագիտական աջակցություն պահանջող խնդիր:

Դրա համար հարկավոր է արագ կարգով բացահայտել յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքը և օգնելու նրան հաղթահարելու այդ խնդիրները: Իսկ այդ խնդիրները կարող են հարթել միայն աշխատանքը ծնողների հետ, իսկ դպրոցի և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության խմբի մասնագետների աշխատանքը երեխաների հետ: Նրանք կարող են բացահայտել ու աջակցել երեխաներին, որոնք ունեն ուսումնական ծրագրերի ճիշտ պլանավորման, միջավայրի հարմարեցումների և անհրաժեշտ մասնագիտական ծառայությունների տրամադրման կարիք:

1. [1] << Կրթության մասին>>, ՀՀ օրենք, 6-րդ հոդված, մաս 6:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Կրթության մատչելիությունը ու հասանելիությունը, որպես հասարակություն զարգացման ու առաջընթացի հիմնական միջոց, ամրագրվել են դեռևս 1990- ական թվականներին, երբ ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների կողմից ընդունվեցին

<< Երեխաների իրավունքների>> կոնվեցիան(1989, ՄԱԿ) և << Կրթություն բոլորի համար համաշխարհայինհռչակագիրը>> (2000):

1994 թվականին աշխարհի 92 երկրների կառավարությունների ու 15 միջազգային կազմակերպությունների կողմից ստորագրված <<Սալամանկարի հռչակագիրը>> սահմանեց, որ յուրաքանչյուր երեխա ունի կրթական առանձնահատկություններ և կրթական հիմնարար իրավունք: Համաձայն այս հռչակագրի, կրթական ծրագրերը պետք է մշակվեն և իրականացվեն հաշվի առնելով այդ առանձնահատկությունները:

<< Կրթության մասին>>(2)[2] Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ- 297 օրենքը սկիզբ դրեց հատուկ կրթության համակարգի բարեփոխումների ու ներառական կրթության հիմնադրման , որի հիմքում յուրաքանչյուր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքիգնահատումն է, կրթության կազմակերպումն իր համայնքում՝ առանց ընտանիքից մեկուսացնելու, և կրթության գործընթացին երեխայի մասնակցության խրախուսման սկզբունքների ապահովումը:

Պետք է առանձին վերցրած աշակերտի համար ապահովել նրա կարողություններին և կարիքներին համապատասխան որակյալ կրթություն: Դրա համար անհրաժեշտ է ուսումնական գործընթացում դիտել, գնահատել, հետևել որպես անհատ՝ իր կարողություններով, ընդունակություններով, դժվարություններով և հետաքրքրություններով:(3)

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը երեխայի զարգացման տարբեր փուլերում նրա մասին բազմաբնույթ տեղեկությունների հավաքագրման ու տվյալների համակարգման գործընթաց է, որն իրականացվում է երեխայի բնական միջավայրում ՝ ապահովելով երեխայի ուսումնական ծրագրերի ճիշտ պլանավորումը, անհրաժեշտ մասնագետների ծառայությունների և միջավայրին հարմարեցումների տրամադրումը:(4)

[2] << Հանրակրթության մասին>> ՀՀ օրենք, մաս 10. 5- րդ կետ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան ննպատակ ունի սահմանելու՝

1. Երեխայի կրթության առանձնահատուկ պայմաններ՝ ապահովելով ծրագրային, մեթոդական և այլ միջավայրին անհրաժեշտ հարամարեցումներ:
2. ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում ֆինանսավորման բարձրացման չափաքանակ տրամադրելու հիմքերը. (5)
3. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մակարդակը, ծավալները և տևողությունը:

Երեխայի կրթական կարիքների բացահայտման , գնահատման գործընթացն իրականացվում է կրթական յուրաքանչյուր աստիճանի առաջին տարում՝ առաջին, հինգերորդ և տասներորդ դասարանում:

Գնահատվում է նաև երբ երեխայի մոտ ուսումնասիրության ընթացքում նկատվում է կայուն դժվարություններ:(6)

Գնահատումն իրականացվում է երկու փուլով.

1. Դպրոցական մակարդակի գնահատում, որն իրականացվում է հաստատության ուսուցիչների և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից՝բացահայտելու կրթության գործընթացում երեխայի արդյունավետ մասնակցության սահմանափակումները, դրանք առաջացնող միջավայրին խոչնդոտող գործոնները և դրանց հաղթահարման խթանիչ գործոնները:
2. Տարիքային մակարդակի գնահատում, որն իրականացվում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրենի կողմից՝ որոշելու երեխայի մոտ այս կամ այն ֆունկցիաների խանգարման աստիճանը, և դրանով պայմանավորված՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

Ամեն տարի վկայագրված յուրաքանչյուր երեխայի համար նույն խմբի կողմից կատարվում է վերագնահատում առաջընթացը և հետընթացը պարզելու համար:

Կրթության ցանկացած փուլում, երբ երեխայի մոտ նկատվում են կայուն դժվարություններ, ապա ծնողի համաձայնությունից հետո իրականացվում է երեխայի դպրոցական մակարդակի գնահատում: Ծնողի համաձայնությունից և 3- օրյա ժամկետից հետո կատարվում է(տնօրենի հրամանով) դպրոցական մակարդակի գնահատում՝ ուսուցիչների և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից:

Դպրոցական մակարդակում գնահատումը սկսվում է ուսուցչի դիտարկումով՝ դասապրոցեսի ընթացքում, դասամիջոցին, արտադասարանական միջոցառումների ժամանակ: ՈՒսուցչի և մանկավարժահոգեբանական խմբի համագործակցության արդյունքում կատարվում է տվյալների հավաքագրում երեխաների կարողությունների, հետաքրքրությունների, անձնային որակների, կարիքների և դժվարությունների, հասակակիցների հետ փոխհարաբերություններեւ մասին: Ելնելով առաջին փուլի դիտարկման արդյունքների ուսումնասիրությունն ու վերլուծությունը տևում է 10-15 օր՝ծնողի գրավոր դիմումի ընդունման օրվանից հաշված:

Եթե երեխան մի քանի ոլորտներում ունի թեթև դժվարություններ, ապա մանկավարժահոգեբանական աջակցության խումբը մշակում է կանխարգելիչ միջամտությունների պլան՝ կիսամյակային կտրվածքով ծառայությունների տրամադրման և միջավայրին հարմարեցումների վերաբերյալ:

Եթե գնահատման արդյունքների վերլուծությունը վկայում է երեխայի մոտ որևէ ֆունկցիայի խանգարման հավանականություն, ապա, երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի երկրորդ մակարդակի գնահատում է իրականացվում:(7)

Դրա նպատակով դպրոցը, ծնողի համաձայնությամբ, տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն է ներկայացնում երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի 2-րդ մակարդակի գնահատման դիմումը՝ կից փաստաթղերով.

- Երեխայի ծննդյան վկայականի և ծնողի անձնագրի պատճեն
- Երեխայի անձնական գործի պատճեն
- Երեխայի առողջության վկայականի մասին փաստաթուղթը
- Դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների գրանցման թերթիկը
- Կանխարգելիչ միջամտության պլանը՝առկայության դեպքում:

10- օրյա ժամկետում նշանակվում է երեխայի տարածքային մակարդակի գնահատումը սկսելու օրը։

Տարածքային մակարդակի գնահատման միջոցով որոշվում է երեխայի մոտ այս կամ այն ֆունկցիայի խանգարման աստիճանը և դրանով պայմանավոնբած կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը։

Իսկ եթե ծնողը համաձայն չէ այդ գնահատմանը, կարող է դիմել համապետական մանկավարժահոգեբանական կենտրոն։

Կարևոր է, որ ուսուցիչը կամ մանկավարժահոգեվանական աջակցության խումբը դիտարկման արդյունքում կարողանա պարզել, թե երեխան <<Երեխայի գործունեության գնահատման գործիք>>-ի որ ոլորտում ունի դժվարություններ և բացահայտել աջակցության չափը։

Դպրոցականների համար նախատեսված երեխայի գործունեության գնահատման գործիքը բաղկացած է 20 բաժիններից. ըմբռնել հրահանգները և հետևել դրանց, հարմարեցման կարողություն, ինքնասպասարկում, խոշոր մոտորիկա, տեղորոշում և այլն։

Գործիքը կիրառող մասնագետները պետք է կատարեն օբյեկտիվ գնահատում՝ բացառելով դրական կամ բացասական վերաբերմունքը երեխայի նկատմամբ։

Գործողությունների կամ աջակցության մակարդակների նկարագրություն։

Աջակցություն չի պահանջում՝

- Լիակատար ինքնուրույնությունը
- Ձևավորվող ինքնուրույնությունը

Աջակցության անհրաժեշտություն՝

- Թեթև աջակցություն
- Միջին աջակցություն
- Մեծ հաճախականությամբ աջակցություն
- Ամբողջական կամ մշտական աջակցություն

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների հիմքի վրա.

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցում,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,
- երեխայի համակողմանի բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացման:

Ընտանիքները որոշիչ դեր ունեն ներառական կրթության գործընթացում: Նրանք ականատեսն են երեխայի տարրական դպրոցից միջին, ապա ավագ դպրոց փոխադրմանը: Այդ դեպքում ինչո՞ւ են ծնողները հաճախ փոքր դեր կատարում իրենց երեխաների կրթության գործում: Պատմականորեն ընտանիքին դուրս են մղել երեխայի կրթության հարցերով զբաղվող թիմի աշխատանքից՝ նրանց հիմնականում թողնելով մասնագիտական կարծիք լսողի դերը: Նույնը եղել է Հայաստանում, որտեղ ծնողների և մասնագետների միջև երկխոսությունը հաճախ շարունակում է հետևել առավել ավանդական, հիերարխիկ մոտեցմանը: Ծնողները կամ ընտանիքները հիմնականում ներկայանում են հանդիպումների՝ թեստերի արդյունքներին ծանոթանալու կամ իրենց երեխային վերաբերող որոշումները լսելու համար: Դպրոցը ծնողների հետ, որպես կանոն, կապվում է, երբ նրանցից որևէ բան է հարկավոր կամ երբ ինչ-որ բան է պատահել: Ընտանիքների դերի փոփոխությունը՝ պլանավորման գործընթացին վերաբերող տեղեկատվությունը պասիվ ստացողից դեպի ակտիվ մասնակցողի, վճռական նշանակություն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ներառական կրթության պլանավորման համար: Այս փոփոխությունը թե՛ ընտանիքների և թե՛ մասնագետների համար ինքնին հսկայական փոփոխություն է: Այս փոփոխությունը կարևոր է, քանի որ ընտանիքները երեխայի մասին տիրապետում են առավել հարուստ տեղեկատվության, քան մասնագետները և գիտեն ավելին, քան վկայում են թեստերի արդյունքներն ու

գնահատականները: Ընտանիքների մեծ մասը գիտակցում է երեխայի առաջընթացն ու կարիքները, սակայն, հիմնականում, մնում է որպես չօգտագործված ռեսուրս:

Միայն ծնողների մասնակցության ապահովումը երբեմն շատ կարևոր նվաճում է, որը հաղորդակցումը դարձնում է փոխհարաբերություն: Հարկավոր է նկատի ունենալ ընտանիքի բոլոր անդամների մասնակցության խրախուսումը: Մասնակիցների մեջ մտնում են ինչպես ծնողները, այնպես էլ ընտանիքի մերձավոր անդամները: Այս փոփոխությունը քննարկելիս, հաճախ օգտագործվում են այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են՝ մասնակցությունը և ներգրավվածությունը: Սոսկ մասնակցությունից դեպի ներգրավվածություն մեկ քայլ է: Այն ցույց է տալիս դպրոցի դիրքորոշումը ընտանիքների ներքին կարողության ճանաչմանն ու նրանց թիմի լիիրավ անդամ ընդունելուն ընդառաջ: Իրենց ներգրավված զգալով՝ մարդիկ անցնում են գործի՝ ստանալու այն, ինչը ցանկանում են և ինչի կարիքն ունեն: Հաճախ ընտանիքները դպրոցում չեն ունենում ներգրավվածության զգացում և, իրենց անզոր զգալով՝ հեռանում են գործընթացից: Ուժեղ, զորացնող գործընկերային հարաբերությունների պարագայում մասնագետներն ընտանիքի համար ստեղծում են զարգանալու և թիմային գործընթացում ակտիվ դերեր ստանձնելու հնարավորություններ:

Անցումը մասնակցության և ընդգրկման մոդելից դեպի ներգրավվածություն պահանջում է ավելի բարձր մակարդակի երկխոսություն և համագործակցություն: Մասնակցությունն այդ դեպքում պահանջում է որոշակի պատասխանատվության ստանձնում, որոշակի գործողությունների կատարում: Այս փոփոխությունը ընկալելուն օգնում է Day-ի առաջարկած աղյուսակը, որտեղ ներկայացված են մասնակցությունը ներգրավվածությամբ փոխարինելուն նպաստող, դպրոցի անձնակազմի կողմից կիրառվող մոտեցումներ: Այն օգնում է մասնագետներին առաջընթացը տարբերակել երեք մակարդակներում՝ ներկայություն, մասնակցություն և ներգրավվածություն: Ներկայության հիմնական նպատակն է՝ ծնողին օգնել, որ երեխային տեսնի որպես ներառական միջավայրի մասնիկը և գիտակցի իր դերը երեխայի կրթության գործում: Մասնակցությունը ենթադրում է ծնողների ներկայությունը դպրոցական միջոցառումներին և ժամանակ առ ժամանակ այցելությունները դպրոց՝ ծանոթանալու տարբեր մանկավարժական միջոցներին, որոնք կարող են օգտագործվել տանը՝ իրենց երեխային օգնելու

համար։ Ներգրավվածության փուլում ծնողները և ուսուցիչները սկսում են համագործակցել՝ միմյանց տեսնելով որպես երեխայի կրթության գործընկերներ։ Ներգրավվածությունը պահանջում է բարձր մակարդակի համագործակցություն և հզորացնում է ընտանիքին, ուսուցչին ու բազմամասնագիտական թիմի մյուս անդամներին։ Միաժամանակ, ներգրավվածությունը ընտանիքին հնարավորություն է տալիս զարգացնելու երեխային օժանդակելու ստեղծագործական մոտեցումները։ Աղյուսակ 6-ում տրված են օրինակներ յուրաքանչյուր փուլի համար։ Դպրոցներում այս ձևաչափը կարող է օգտագործվել ծնողի ներգրավվածությունը ապահովելու նպատակով։ Գործընթացը պահանջում է ժամանակ և նպատակասլացություն, բայց հզորանալով՝ ընտանիքը դառնում է թիմի և դպրոցական համայնքի լիարժեք անդամ՝ ձգտելով հասնել երեխայի լավագույն շահի իրացմանը։ Ներկայություն Ընտանիքը հաճախում է ժողովների, որոնք անցկացնում են ուսուցիչները։ Մասնակցություն Ընտանիքը և ուսուցիչը միասին են անցկացնում ժողովը։ (9)

Day-ի առաջարկած աղյուսակը

Ներկայություն *Ընտանիքը հաճախում է ժողովների, որոնք անցկացնում են ուսուցիչները։*	**Մասնակցություն** *Ընտանիքը և ուսուցիչը միասին են անցկացնում ժողովը։*	**Ներգրավվածություն** *Ընտանիքը (և աշակերտը) վարում է ԱՈԻՊ-ին առնչվող ժողովը։*
Ընտանիքը ստանում է ԱՈԻՊ-ը և ստորագրում այն։	Ընտանիքը մասնակցում է ԱՈԻՊ-ի մշակման համար կայացող հանդիպմանը, բայց ունենում է պասիվ դերակատարում։	Ընտանիքը ակտիվորեն մասնակցում է հանդիպումներին՝ նպատակների սահմանմանը, հանդես է գալիս դիտարկումներով ու ստանում հետադարձ կապ ու

		արձագանքներ։
Առարկայական - Ընտանիքը տեղեկացվում է ընթերցանության ուսումնական ծրագրի և նպատակների մասին։	Ընտանիքը դիտում է, թե ուսուցիչն ինչպես է աշխատում երեխայի հետ։	Ընտանիքն ուսուցչի հետ քննարկում է այդ նպատակները տանն ամրապնդելու հնարավոր ձևերը։

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Թե հատուկ և թե հանրակրթական դպրոցի մանկավարժները ծանոթ են տարբերակված ուսուցման գաղափարին: Այս ընդգրկուն հայեցակարգը ուսուցիչներին հնարավորություն է տալիս առանձին թեմաներ դասավանդելիս մարտահրավերները հարմարեցնել սովորողների անհատական առանձնահատկություններին:

ՈՒսուցիչը կարող է ավելացնել և պակասեցնել բառատետրում գրվող անծանոթ բառերի քանակը, որը աշակերտը պետք է սովորի նախքան նոր դասն անցնելը:

Տարբերակված ուսուցումը կարող է լինել ՈՒՀՁ գործընթացի մի մաս: Հետազոտությունները ցույց են տվել, որ որոշ սովրողների համար յուրացման չափանիշները կամ ակնկալիքները փոփոխելու անհրաժեշտությունը կարող է սակավ լինել, եթե դասավանդելիս կիրառվեն բազմազան նյութեր:

Այն դեպքում , երբ սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքները վաղօրոք նկատի են առնվում և մատչելի դասավանդումը դրվում է դասի պլանավորման հիմքում՝ բոլորը կարողանում են ավելի լավ սովորել:

ՈՒսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքները խարսխված են ուսուցման 3 տեսակների վրա՝ ճանաչողական, ռազմավարական և հուզական:

Ճանաչողական ուսուցումը վերաբերվում է սովորողի՝ հասկացություններ ճանաչելու և մտապահելու կարողությանը: Սրան նպաստում է ուսուցչի աշծատանքը կամ տեքստիընթերցումը:

Ռազմավարական ուսումնասիրությունը վերաբերում է որոշակի բովանդակությանը, հասկացություններին արձագանքելու սովորողի կարողությանը կամ հմտություններին: ՈՒսումնառության այս տեսակը հաճախ անցկացվում է գրավոր առաջադրանքների կան դասարանում բանավոր պատասխանելու միջոցով:

Հուզական յուրացումը վերաբերում է նյութը յուրացնելու սովորողի մոտիվացիային:

Համընդհանուր ձևավորումը ուղղված է սովորողներին՝ որպես <<սովորական>> ու <<առանձնահատուկ>> տարբերակումը վերացնելուն, ելնելովնրանից, որ

յուրաքանչյուր անհատ տարբեր կերպ է սովորում և որ բազմազան մոտեցումների կիրառումը կօգնի բոլոր սովորողներին:

Երբ ուսուցիչները հիմնավորապես ընդունում են դասարաններում տարբեր ունակությունների տեր սովորողների ներկայությունը և դասապրոցեսը կազմակերպում են այնպես, որ ներգրավվեն բոլոր սովորողներին:

Գոյություն ունեն դասվանդման ամենատարբեր մոտեցումներ,որոնք ուսուցիչների կողմից կարող են օգտագործվել դասարանում համընդհանուր ձևավորման խթանման համար:

Ներառական կրթության հաջողությունը պայմանավորված է բազմաթիվ մակարդակներում համագործակցությամբ: Թեև բազմամասնագիտական թիմերը կարևոր են երեխային կրթության մեջ ներգրավելու համար՝ ներառումը լավագույնս իրականացնելու, երեխաների ու նրանց ընտանիքների կարիքները հաշվի առնելու հարցում առավել կարևոր է դասարանում առկա համագործակցությունը: Բարեհաջող կրթական միջավայր ստեղծելու կարևոր նախապայման է դասավանդմանը մեկ այլ տեսակետից մոտենալը: Դպրոցի ռեսուրսների արդյունավետ օգտագործումը ապահովում է ուսումնառության առավել հաճելի միջավայր՝ լավագույնս բավարարելով ուսման ամենատարբեր կարիքներ ունեցող երեխաներին անհրաժեշտ պայմանները: Ներառական դասարաններում բոլոր երեխաներին ամենաարդյունավետ կերպով դասավանդելու համար կիրառվում է մի մոտեցում, որը հայտնի է որպես համատեղ դասավանդում: Համատեղ դասավանդմանը վերաբերող հետազոտությունները դեռևս վաղ փուլում են, սակայն ըստ հետազոտություններից մեկի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտները համատեղ դասավանդման կիրառման դեպքում առավել ներգրավված են լինում դասապրոցեսում, առավել բարձր գնահատականներ են ստանում, քան մեկ ուսուցչի կողմից դասավանդվող դասերին : Բարձր դասարանների աշակերտների հետ անցկացված հետազոտության արդյունքները վկայում են, որ աշակերտներին դուր է գալիս համատեղ դասավանդումը և որ հնարավորության դեպքում կրկին կմասնակցեին համատեղ դասավանդվող դասերի: Աշակերտները նշում են, որ իրենց ավելի շատ է աջակցություն տրամադրվել, օգտագործվել են դասավանդման տարբեր ոճեր: Համատեղ դասավանդումը ուսուցիչներին տալիս է անհրաժեշտ աջակցություն ունենալու հնարավորություն, միաժամանակ աշակերտների համար ապահովելով ներգրավվածություն դասապրոցեսում:

ՈՒսումնական տարվա ընթացքում, իրենց սովորողներին ճանաչելով և օգնելով աշակերտներին նկարագրող տեղեկատվական աղբյուրներից, ուսուցիչները կարող են դասավանդումը հարմարեցնել իրենց սովորողների կարիքներին: Միևնույն ժամանակ համընդհանուր ձևավորման գաղափարական հիմքը համահունչ է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվեցիայի(8) առավել լայն փիլիսոփայությանը: Գործնականում բազմազան միջոցների կիրառմամբ նյութը ներկայացնելը, արտահայտվելու համար բազմաթիվ հնարավորություններ ընձեռելը, և սովորողի համար ներգրավվածության բամազան միջոցների տրամադրումը կարող է տարբեր դասարաններում տարբեր լինել: Օրինակ՝ ուսուցիչը կարող է ցուցադրել տեսահոլովակ, որպեսզի սովորողները կարողանան միաժամանակ կարդալ տեղեկատվությունը: Սա կարող են կիրառել լսողության խանգարումներ ունեցող երեխաների համար:

Նյութի պատրաստման բազմազան միջոցներից է թատրոնը, սահիկաշարը, նկարներ: Իսկ արտահայտվելու միջոցներ են արձագանքի քարտերը, բանավոր արտահայտում, հասկացությունների քարտեզավորում և այլն:(9)

ՈՒՀՁ-ը ուսուցիչների կողմից դասը պլանավորելիս, գործընթացի հիմքում դրվում է համընթանուր ձևավորման բոլոր 3 սկզբունքները՝ նյութի մատուցման, արտահայտվելու և ներգրավելու ճկուն միջոցներ:

Հայաստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքունեցող երեխաները ունեն անհատական ուսուցման պլաններ: ԱՈՒՊ-ը ունի 3 հիմնակն նպատակ՝ հասանելիություն, մասնակցություն և առաջընթաց:

ՈՒսումնական գործընթացի լավ ձևավորման համար ուսուցիչները պետք է մշտապես գնահատեն իրավիճակները՝ ապահովելով հարգանք սովորողների կրթության իրավունքների նկատմամբ և մշտապես պլանավորեն նրանց կրթական կարիքների բավարարումը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ,Միջնակարգ կրթության պետական չափորոշչովե նախատեսված ուսումնական 9 բնագավառների թվում թեև կարևորվել է ,Ֆիզիկական կրթություն, նախնական զինվորական պատրաստություն (ՆԶՊ) և անվտանգ կենսագործունեությունե բնագավառը, որում ընդգրկվել է 8-9-րդ դասարանների համար նախատեսված ,Առողջ ապրելակերպե դասընթացը, սակայն

կրթության անընդհատության և շարունակականության ապահովման տեսանկյունից առողջ ապրելակերպի ուսուցումը V-VII դասարաններում մնում է թերի, քանի որ առանձին դասընթաց նախատեսված չէ, իսկ մյուս առարկաներում եղած ուսումնական նյութը համակարգված չի ներկայացվում :

Այս խնդրի լուծման համար առաջարարկվում է, որպես առաջին քայլ, օգտագործել դասղեկական ժամերը՝ հետագայում հարցին տալով արմատական լուծում:

,Առողջ ապրելակերպիե կրթության հիմնական նպատակն է՝ սովորողների մեջ ձևավորել սեփական և այլոց առողջությունը որպես կարևորագույն արժեք գնահատելու որակ և այն պահպանելու համար գիտելիքների, կարողությունների ու հմտությունների վրա հիմնված անվտանգ վարքագիծ:

Ուսումնառության արդյունքում սովորողների մոտ պետք է ձևավորվի համապատասխան վերաբերմունք, առողջությունը որպես կարևորագույն արժեք ընկալելու պատրաստակամություն և այն գնահատելու ունակություն, հանրային համակեցության որակներ, առողջ, ապահով և անվտանգ վարքագիծ՝ առողջ կենսակերպ, ապրելաձև:

,Առողջ ապրելակերպիե կրթության խնդիրները սահմանվում են են հետևյալ հիմնական դրույթներով.

ա) Զարգացնել սովորողների գիտական աշխարհայացքը, անհրաժեշտ գիտելիքներ տրամադրել և հմտություններ զարգացնել ներքոհիշյալ հարցերի վերաբերյալ՝

- առողջության պահպանման եղանակներ, մեթոդները և հիմնական միջոցառումները,
- վնասակար սովորությունների, սխալ վարքագծի պատճառով առաջացող հիվանդությունների կանխարգելումը,
- ծխախոտի, ալկոհոլի, թմրամիջոցների նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորումը,
- առողջության պահպանմանն ուղղված պատասխանատու, անվտանգ վարքագծի ձևավորումը,
- շրջակա միջավայրի որակի գնահատումը,

- մարդու կյանքին և առողջությանը անմիջական վտանգ սպառնացող հիվանդությունների (ՄԻԱՎ/ՁԻԱՀ, սեռավարակներ), թմրամիջոցներից կախվածությունների նախականխումը:

բ) Ձևավորել առողջ ապրելակերպի հմտություններ, ինչպես նաև սովորողների մոտ զարգացնել տեղեկատվական աղբյուրներից օգտվելու, տեղեկատվությունը վերլուծելու և համադրելու կարողություն:

գ) Նպաստել ,Առողջ ապրելակերպիե թեմաների շրջանակներում սովորողների հետ տարվող արտադասարանական, դաստիարակչական աշխատանքների պլանավորմանը և կազմակերպմանը, առանձին միջդասարանային, համադպրոցական, միջդպրոցական միջոցառումների (օլիմպիադաներ, գիտելիքների ստուգատես-մրցույթներ և այլն) ծրագրմանը և անցկացմանը:

դ) Առողջ ապրելակերպի քարոզչության և ապահովման խնդիրների լուծմանը ներգրավել սովորողներին, նրանց ծնողներին և համայնքի ներկայացուցիչներին:

Պետք է հաշվի առնել, որ ,Առողջ ապրելակերպըե թեև ներառված է չափորոշչով նախատեսված ,Ֆիզիկական կրթություն, նախնական զինվորական պատրաստություն (ՆԶՊ) և անվտանգ կենսագործունեությունե բնագավառում, սակայն այն հանդիսանում է ինքնուրույն համապարփակ ոլորտ, ներառում է յուրահատուկ թեմաներ, որոնք պետք է ուսումնասիրվեն միանգամայն այլ մեթոդներով և եղանակներով: Այստեղից էլ խնդիր է առաջանում սովորողների գնահատման մեթոդների ընտրության և ուսուցիչների մասնագիտական զարգացման հարցում:

Նախատեսվում է, որ ստուգարքային, հարցախույզների և գնահատման ոչ ավանդական այլ եղանակների կիրառումը սովորողներին և ուսուցիչներին հնարավորություն կտա վստահության մթնոլորտ ձևավորել և դասարանի միջավայրում ազատ արտահայտվել:

Միաժամանակ հարկ կլինի իրականացնել ուսուցիչների վերապատրաստում՝ սովորողների հետ դասընթացի յուրահատկություններին համապատասխան աշխատանք վարելու համար:

Հանրակրթության ոլորտը կարգավորող նորմատիվ ակտերի պահանջների և կրթության բովանդակության կառուցվածքի համաձայն 12-ամյա հանրակրթական դպրոցում ,Առողջ ապրելակերպըե դիտարկվում է որպես.

ա) համակարգված գիտելիքներ

բ) կարողություններ և հմտություններ (ճանաչողական, տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական, ինքնուրույն գործունեության)

գ) արժեքային համակարգի մաս, պատշաճ վերաբերմունք, վարքագիծ:

Ելնելով վերոնշյալից, առաջարկվում է պահպանել ուսումնական նյութերի մշակման և դպրոցում առանձին դասընթացների ներդրման հետևյալ սկզբունքները.

1. համապատասխան գիտելիքների, կարողություններ և հմտությունների արժեքային համակարգի, դրական վարքագծի ձևավորումն իրականացվում է հանրակրթության տևողության ամբողջ ժամանակաշրջանում (I-XII դասարաններ), ըստ դպրոցի հաջորդական աստիճանների.

2. ապահովվում է ,Առողջ ապրելակերպիե կրթության միասնական բովանդակությունը բոլոր դպրոցների համար՝ հանրակրթության պետական կրթակարգի և միջնակարգ կրթության պետական չափորոշչին համապատասխան.

3. ապահովվում է միջառարկայական կապը, տարբեր առարկաների մեջ ուսումնական նյութի ինտեգրումը և առանձին ուսուցանվող ,Առողջ ապրելակերպե դասընթացների ներդրումը՝ ուսպլանի պետական և դպրոցական բաղադրիչների հաշվին. միաժամանակ խրախուսվում է նախասիրական և արտադասարանական լրացուցիչ պարապմունքների և միջոցառումների կազմակերպումը.

4. իրականացվում է ուսումնական թեմաների, տեղեկատվական և ընտրություն, ապահովվում է դրանց բազմազանությունը, ,պարուրաձևե մշակում-զարգացումը և մատուցումը՝ հաշվի առնելով սովորողների տարիքային, հոգեբանական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, վարքագիծը.

5. կիրառվում է ուսուցման և դաստիարակության գործընթացների միասնականացման մոտեցում.

6. ապահովվում է ուսումնական գործընթացին սովորողի հարաճուն, ակտիվ մասնակցությունը, համագործակցային, ինտերակտիվ մեթոդների կիրառումը, բաշխման նյութերի օգտագործումը

7. կանխվում է չփաստարկված, անտեղի, իմաստազուրկ քարոզչության

դրսևորումները.

8. կարևորվում է սովորողի մտածողության խթանումը, ինքնուրույն եզրահանգումների գալը և համոզիչ փաստարկներ բերելը՝ հատկապես վտանգավոր, վնասակար սովորությունների հնարավոր հետևանքների վերաբերյալ թեմաների արծարծման ժամանակ.

9. կիրառվում է ընթացիկ և ամփոփիչ գնահատման նոր համակարգ՝ առավելապես հիմնված ուսուցողական, գիտելիք և հմտություն ձևավորող գնահատման ձևերի վրա:

Հայտնի է որ, որպես առանձին դասավանդվող դասընթացներ ներկայումս ,Առողջ ապրելակերպըե ներդրված է հիմնական դպրոցի 8-9-րդ դասարաններում, իսկ առաջիկայում, ավագ դպրոցի բարեփոխումների իրականացման շրջանակներում առաջարկվել է այն ներդնել նաև բարձր դասարաններում, որտեղ ,Առողջ ապրելակերպե դասընթացը կշարունակվի ուսումնասիրվել որպես միջնակարգ կրթության պետական չափորոշչով սահմանված ,Ֆիզիկական կրթություն, նախնական զինվորական պատրաստություն (ՆԶՊ) և անվտանգ կենսագործունեությունե ուսումնական բնագավառի կարևոր բաղադրիչ: Ավագ դպրոցի ,Առողջ ապրելակերպե դասընթացի ուսումնական ծրագրերում սովորողների տարիքային զարգացմանը համապատասխան կներառվեն նոր թեմաներ, իսկ հիմնական դպրոցում ուսումնասիրված առանձին թեմաներ կներկայացվեն առավել խորությամբ՝ շեշտադրելով ոչ միայն գիտելիքների յուրացման, այլև համապատասխան կարողությունների ու հմտությունների ձևավորման անհրաժեշտությունը:

Յուրաքանչյուր թեմայի համար պետք է սահմանվի նպատակը, ակնկալվող արդյունքը՝գիտելիքների յուրացման և համապատասխան կարողության կամ հմտության ձևավարման, ձեռքբերման տեսանկյունից:

Առաջարկվում է հանրակրթական հիմնական դպրոցի 8-9-րդ դասարանում ,Առողջ ապրելակերպիե կրթությունն իրականացնել հաշվի առնելով նախորդ դասարաններում սովորողների ձեռք բերած գիտելիքների ու հմտությունների մակարդակը, նրանց տարիքային և սեռային առանձնահատկությունները: Դասընթացի բովանդակությունը խորացնելով աստիճանաբար, իսկ թեմաների հաջորդականությունը

կառուցելով պարուրաձև զարգացման սկզբունքով:

Թեմաները պետք է ընդգրկեն հետևյալ բովանդակային ուղղությունները՝

1. Ֆիզիկական առողջություն,
2. Հոգեկան առողջություն,
3. Սոցիալական առողջություն,
4. Առողջության վրա ազդող գործոններ և միջավայր:

Այս ուղղությունները ներառում են հետևյալ բովանդակային բաղադրիչները՝

- առողջության պահպանման վերաբերյալ արժեքային ընկալումների զարգացում,
- անձնական հիգիենայի հմտություններ,
- առողջ սնունդ և սննդակարգի պահպանում,
- հիվանդություններ, համաճարակներ և դրանցից պաշտպանվելու ուղիները, կարողությունների ձևավորումը
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում,
- ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման և չարաշահման կանխարգելում,
- վերարտադրողական առողջություն, սեռական վարքագիծ,
- առողջ շրջակա միջավայրի կարևորում,
- միջանձնային հարաբերությունների, հանրային համակեցության և սոցիալական շփման հմտությունների, համագործակցային և հանդուրժողականության որակների ձևավորում, գաղափար հոգեկան առողջության մասին:

Միաժամանակ, կթության բովանդակության մեջ, սովորողների տարիքին համապատասխան, պետք է ներառվեն ու պարզաբանվեն միջազգայնորեն ընդունված և հաճախակի շրջանառվող մի շարք կարևոր հասկացություններ ու գաղափարներ, դրանց թվում՝ ,առողջության գործոններե, ,ամուսնական հարաբերություններե, ,ընտանիքի պլանավորումե, ,անվտանգ վարքագիծե, ,դիրքորոշումե, ,հակազդումե, ,ժուժկալությունե, ,համախտանիշե, ,պանդեմիաե, ,վարակակիրե, ,խոցելի խմբերե, ,ապրումակցումե, ,տեղեկացվածությունե, ,հոգեկան և ֆիզիկական կախվածությունե, ,էյֆորիաե, ,վնասի նվազեցումե և այլն:

Բովանդակային վերոնշյալ ուղղությունների համակարգված ուսուցումը

հնարավորություն է տալիս սովորողներին ձևավորել սեփական և այլոց առողջությունը պահպանելու վարքագիծ և այն որպես կարևորագույն արժեք գնահատելու որակ:

Որպես առանձին դասընթաց ,Առողջ ապրելակերպը դասավանդվում է հանրակրթական դպրոցի օրինակելի ուսումնական պլանով սահմանված կարգի և ժամանակացույցի համաձայն:

,Առողջ ապրելակերպիե կրթությունը կնպաստի սովորողների ֆիզիկական, մտավոր, բարոյական, հուզական զարգացմանը: Այն հնարավորություն կտա արժեքների համակարգում կարևորել առողջությունը, ընտանիքը, առողջ ընտանեկան հարաբերությունները, կայունությունը, ինչպես նաև սեռերի միջև փոխհարաբերություններում հարգանքը, սերը և հոգածությունը:

,Առողջ ապրելակերպիե կրթության միջոցով հնարավոր կլինի նպաստել հստակ դիրքորոշումների ձևավորմանը, որոնք իրենց հերթին կօգնեն սովորողներին ճիշտ, հաշվեկշռված որոշումներ կայացնել:

,Առողջ ապրելակերպիե կրթությունն հնարավորություն կտա նաև խորացնել սովորողների գիտելիքները սեռերի փոխհարաբերությունների, սեռային առանձնահատկությունների, սեռական առողջության, վերարտադրության, հույզերի և փոխհարաբերությունների մասին, գիտակցել սեռական կյանքի հետաձգման անհրաժեշտությունը: Միաժամանակ, հիմնական և ավագ դպրոցներում առողջությունը որպես կարևորագույն արժեք ճանաչող քաղաքացու ձևավորումը կնպաստի ֆիզիկական, մտավոր և հոգևոր բարձր ներուժով գործունակ հասարակության ձևավորմանը:

Այսպիսով, վերջնարդյունքում սովորողների մոտ պետք է ձևավորվի համապատասխան վերաբերմունք, առողջությունը որպես կարևորագույն արժեք ընկալելու պատրաստակամություն և այն գնահատելու ունակություն, հանրային համակեցության որակներ, առողջ, ապահով և անվտանգ վարքագիծ՝ առողջ կենսակերպ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իսկ ի՞նչ ենք հասկանում ներառական կրթություն ասելով: Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հատուկ կարիքներ ունեցող երեխաներին:

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար:

Ներառական կրթությունը ավելի մատչելի է դարձնում կրթությունը բոլորի համար:

Պետք է բոլորը հասկանան, որ մարդկային արժեքները կախված չեն նրա ընդունակություններից և նվաճումներից:

Յուրաքանչյուրն էլ կարող է զգալ և մտածել:

Յուրաքանչյուր ոք ունի

- հասարակության լիարժեք անդամ լինելու,
- կրթության ստանալու իրավունք:
- կրթությունը կարող է իրականանալ տարբեր փոխհարաբերությունների պայմաններում:
- աջակցության և ընկերության կարիք:

Վերջնարդյունքում պետք է տեսնել նրա նվաճումները, թե նա ի՞նչ կարողացավ անել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. << Կրթության մասին>>, ՀՀ օրենք, 6-րդ հոդված, մաս 6:[3]
2. << Հանրակրթության մասին>> ՀՀ օրենք, մաս 10. 5- րդ կետ
3. <<Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ>> ՀՀ կրթության և գիտության նախարարի 13. 04. 17թ N 370 – Ա/2 հրամանի հավելված, 32-րդ կետ
4. <<Կրթության մասին>> ՀՀ օրենք, մաս 1, 10. 7-րդ կետ
5. <<Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ>>:
6. <<Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը>>, ՀՀ կրթության և գիտության նախարարի 13. 04. 17թ. N 370- Ա/2 հրամանի հավելված, 38-րդ կետ։

8. ՄԱԿ 2006

2. Ներառական կրթության ռազմավարություններ :Դասագիրք 2019թ